



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2011 թվականի հունվարի 25-ից

ԳՅՈՒՏԵՐ	4, 67
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 69
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	13, 76
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	15, 78
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	19, 82
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	21, 84
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	24
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	26
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	58
ՑՈՒՑԻՉՆԵՐ	59
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	61
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	85

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
 Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
 Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 67
Сведения о выданных патентах.....	6, 69
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	13, 76
Сведения о выданных патентах.....	15, 78
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	19, 82
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	21, 84
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	24
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	26
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	58
УКАЗАТЕЛИ.....	59
СООБЩЕНИЯ.....	61
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	85

CONTENTS

INVENTIONS.....	4, 67
Information on granted patents.....	6, 69
UTILITY MODELS.....	13, 76
Information on granted patents.....	15, 78
INDUSTRIAL DESIGNS.....	19, 82
Information on registered industrial designs.....	21, 84
TRADE MARKS.....	24
Information on registered trade marks and service marks	26
Information on renewal of effect of trademark registration	58
INDEXES.....	59
REPORTS.....	61
TWO-LETTER CODES.....	85

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 71** *հայտատուն, երկրի կոդը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) **(2011.01)** (11) **2469** (13) **A**
A01D 34/00
- (21) **AM20090077** (22) **26.06.2009**
- (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
- (72) Արա Կարապետի Ամիրյան (AM), Արմինե Սիրակի Բաղդասարյան (AM)
- (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) **Ռոտացիոն կտրող ապարատ**
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ բերքահավաքի մեքենաների և հնձիչների ռոտացիոն կտրող ապարատներին:
- Ռոտացիոն կտրող ապարատն ունի իրան, կենտրոնական անիվ, կենտրոնական լիսեռ, պլանետարային մեխանիզմ և վերջինիս սատելիտների վրա տեղակայված կտրող տարրեր: Իրանի ներսում տեղակայված է շղթայա-ալիքային փոխանցման ալիքային գեներատորը: Եռաշարք շղթայի միջին շարքն ընդգրկում է գեներատորը: Շղթայի վերին շարքն ընդգրկում է իրանի հետ միացված փոխանցող աստղանիվը, որի ատամների քանակը հավասար է շղթայի օղակների թվին, իսկ ստորին շարքն ընդգրկում է լիսեռին ամրակցված փոխներգործող աստղանիվը, որի ատամների քանակը պակաս է շղթայի օղակների թվից: Փոխներգործող աստղանիվը ամրակցված է կտրող ապարատի կենտրոնական լիսեռին:
- Կրճատվում են էներգետիկ ծախսերը, բարձրացվում է արտադրողականությունը, 1 նկ.:
-
- (51) **(2011.01)** (11) **2470** (13) **A**
A61B 17/00
- (21) **AM20090154** (22) **16.12.2009**
- (71) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)
- (72) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Բուռնազյան (AM)
- (73) Յուրի Պողոսյան, 0817, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10-րդ փող., 14 (AM), Սեդա Բուռնազյան, 0002, Երևան, Սարյան 40, բն. 3 (AM)

- (54) **Վերին ծնոտային ծոցի պերֆորացիայի փակման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես վիրաբուժական ստոմատոլոգիային:
- Ատամնաբնի հատակին տեղադրում են մեղրամոմե թաղանթ: Այնուհետև ատամնաբույնը 1/2 -2/3 չափով լցնում են առտոգեն, ալյուգեն կամ քսենոգեն ապահանքայնացված, մանրացված ոսկրային մատրիքս՝ խառնված թրոմբոցիտներով հարուստ պլազմայով, իսկ ատամնաբնի դատարկ 1/3-1/2մասը լցնում են թրոմբոցիտներով հարուստ պլազմա, որից հետո ատամնաբույնն արտաքինից ծածկում են մեղրամոմե թաղանթով, սևեռում ինքնակարծրացող պլաստմասսայի պաշտպանական թիթեղով և վերջիններս 12-14 օր հետո հեռացնում:
- Ապահովվում է հիվանդի կայուն ապաքինում:
-
- (51) **(2011.01)** (11) **2471** (13) **A**
A61C 13/00
- (21) **AM20090083** (22) **03.07.2009**
- (71) Գևորգ Հարությունի Սարգսյան (AM)
- (72) Գևորգ Հարությունի Սարգսյան (AM)
- (73) Գևորգ Հարությունի Սարգսյան, 2015, Վանաձոր, Ներսիսյան 12, բն. 4 (AM)
- (54) **Աղիեզիվ կամրջածև պրոթեզների հենակետային ատամների հղկման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է բժշկության բնագավառին, մասնավորապես՝ օրթոպեդիկ ստոմատոլոգիային:
- Հենակետային ատամների դեֆեկտը հարող հատվածները հղկում են թունելային եղանակով, ընդ որում հղկման տրամագիծը կախված է օգտագործվելիք ամրաթելիկի տրամագծից: Այնուհետև ամրաթելիկը հոսուն լիցքանյութով ֆիքսում են հղկված հատվածում և երեսպատում դասական լիցքանյութով:
- Ապահովվում է բավարար ռետենցիաի և ծամող բեռնվածության հավասարաչափ բաշխում հենակետային ատամների վրա:
-

(51) **(2011.01)** (11) **2472** (13) **A**
A61K 33/00

(21) **AM20090085** (22) **07.07.2009**

(71) Մկրտիչ Մելիքյան (AM)

(72) Մկրտիչ Մելիքյան (AM)

(73) Մկրտիչ Մելիքյան, 0025, Երևան, Այգեստանի 9-րդ փող., 4 (AM)

(54) Մարդու օրգանիզմում քիմիական միկրոտարրերի հաշվեկշռի վերականգնման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մարդու օրգանիզմի իմունային ակտիվության բարձրացման եղանակներին՝ օրգանիզմում պակասող քիմիական միկրոտարրերի հաշվեկշռի վերականգնման միջոցով:

Վերականգնումն անցկացնում են երկու փուլով՝ առաջինում կատարում են մարդու օրգանիզմի մակաբույծերից մաքրում և սիլիցիումի քանակությունը մինչև նորմա վերականգնում, իսկ երկրորդ փուլում կատարում են օրգանիզմում պակասող քիմիական միկրոտարրերի ներմուծում: Օրգանիզմի մաքրումը կատարում են դիաֆրագմային էլեկտրոլիզարարի անոդային գոտուց վերցրած անոլիտի ընդունմամբ, իսկ պակասող քիմիական միկրոտարրերի ներմուծումը՝ կաթոդային գոտուց վերցրած կաթոլիտի ընդունմամբ:

Բարձրացվում է մարդու օրգանիզմի մակաբույծերից մաքրման արդյունավետությունը:

(51) **(2011.01)** (11) **2473** (13) **A**
B02B 3/00

(21) **AM20100086** (22) **24.06.2010**

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Սամվել Լիպարիտի Սահակյան (AM), Լիպարիտ Սամվելի Սահակյան (AM), Արամ Գրիգորի Մազմանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Հացահատիկային մշակաբույսերի հատիկների կենտրոնախույս թեփահանիչ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի հատիկների կենտրոնախույս թեփահանիչներին:

Հացահատիկային մշակաբույսերի հատիկների կենտրոնախույս թեփահանիչն ունի իրան, զետեղարան, հատիկատար խողովակ, հատիկային զանգվածի մատուցումը կարգավորող փական, կալսաթակի դեր կատարող պատյան, վերին անշարժ սկավառակ, ստորին սկավառակային ռոտոր, շարժահաղորդ լիսեռ: Սկավառակների միջև բացակը կարգավորվում է ծակային մեխանիզմով: Ստորին սկավառակային ռոտորի աշխատանքային մակերևույթին կոշտ ամրակցված է հղկանյութով պատված բազմապտույտ պարուրած և մետաղական շերտ:

Բարձրացվում է թեփահանման արդյունավետությունը և որակը, նվազում են էներգոծախսերը, 2 նկ.:

(51) **(2011.01)** (11) **2474** (13) **A**
B23C 9/00

(21) **AM20100128** (22) **23.09.2010**

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Լարիսա Համբարձումի Մուրաֆյան (AM), Ռոբերտ Եղիազարի Ավագյան (AM), Բորիս Սերգեյի Բալասանյան (AM), Ստեփան Շմավոնի Խրիստաֆորյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Հանդիպակաց ֆրեզման գործընթացում տաշեղի արմատի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կտրման եղանակով մետաղների մշակման բնագավառին:

Համաձայն եղանակի ֆրեզին հաղորդում են պտտական, իսկ նախապատրաստվածքին՝ մատուցման և պտտական շարժումներ, ընդ որում նախապատրաստվածքի պտտման արագությունը գերազանցում է ֆրեզի պտտման արագությունը և հաղորդվում է ժամանակի առաջադրված պահին՝ կտրման շարժման ուղ-

ղությամբ: Ֆրեզի և նախապատրաստվածքի պտտման առանցքները իրար զուգահեռ են և շեղված միմյանց նկատմամբ: Նախապես իրականացնում են նախնական ֆրեզում, որոշում ստացված տաշեղի առավելագույն շառավիղը: Նախապատրաստվածքի հիմնային մակերևույթին հաղորդում են հարթզուգահեռ շարժում, որի բոլոր կետերի համար ապահովում են միևնույն շրջանային հետագիծը: Ստացված տաշեղների պտտման շառավիղները տեղակայում են նախապատրաստվածքի հիմքին զուգահեռ գծի վրա՝ ֆրեզի երկրորդ կտրող ատամի հետին մակերևույթի ցածրադիր կետով տարվող շոշափողին ուղղահայաց, իսկ նրանց պտտման արագությունը ընտրում են ըստ համապատասխան բանաձևի:

Բացառվում է հարմարանքի վերալարման անհրաժեշտությունը ֆրեզի ատամի և նախապատրաստվածքի ցանկացած փոխդասավորության պայմաններում, ապահովվում է չաղճատված տաշեղի արմատի ստացման հնարավորությունը ֆրեզի բոլոր աշխատող ատամների համար, 2 նկ.:

(51) **(2011.01)** (11) **2475** (13) **A**
B23C 9/00

(21) **AM20100127** (22) **23.09.2010**

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Լարիսա Համբարձումի Մուրաֆյան (AM), Ռոբերտ Եղիազարի Ավագյան (AM), Բորիս Սերգեյի Բալասանյան (AM), Ստեփան Շմավոնի Իրիստաֆորյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Համընթաց ֆրեզման գործընթացում տաշեղի արմատի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կտրման եղանակով մետաղների մշակման բնագավառին:

Համաձայն եղանակի ֆրեզին հաղորդում են պտտական, իսկ նախապատրաստվածքին՝ մատուցման և պտտական շարժումներ, ընդ որում նախապատրաստվածքի պտտման արագությունը գերազանցում է ֆրեզի պտտման արագությունը և հաղորդվում է ժամանակի առաջադրված պահին՝ կտրման շարժման ուղղությամբ: Նախապես իրականացնում են նախնական ֆրեզում, որոշում ստացված տաշեղի առավելագույն շառավիղը: Ֆրեզի առաջին կտրող ատամի գագաթից ստացված տաշեղի կենտրոնով տարվում է ուղիղ դեպի ֆրեզի պտտման առանցքը և դրա վրա տեղակայվում է նախապատրաստվածքի պտտման առանցքը, իսկ պտտման արագություններն ընտրում են ըստ համապատասխան բանաձևի:

Բարձրացվում է տաշեղի արմատի սևեռման ճշտությունը, ստացվում է չաղճատված տաշեղի արմատ, ապահովվում է դրանց ստացումը ֆրեզի միաժամանակ աշխատող բոլոր ատամների համար, 1 նկ.:

(51) **(2011.01)** (11) **2476** (13) **A**
B60T 8/00
B60W 30/00

(21) **AM20100126** (22) **23.09.2010**

(71) Արմեն Ստեփանի Բուդաղյան (AM), Արա Ռուբենի Քալաշյան (AM), Սարիկ Ռուբենի Աղայան (AM)

(72) Արմեն Ստեփանի Բուդաղյան (AM), Արա Ռուբենի Քալաշյան (AM), Սարիկ Ռուբենի Աղայան (AM)

(73) Արմեն Ստեփանի Բուդաղյան, 0033, Երևան, Ա.Խաչատրյան 4, բն. 72 (AM), Արա Ռուբենի Քալաշյան, 0817, Արարատի մարզ, Նոր Խարբերդի 14-րդ փող., 99/1 (AM), Սարիկ Ռուբենի Աղայան, 2413, Կոտայքի մարզ, գ.Պոռշյան, ԳԱՄ 3/4 (AM)

(54) **Ավտոտրանսպորտային միջոցի շարժման կայունության վերահսկման համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է ավտոտրանսպորտային միջոցի (ԱՏՄ) շարժման կայունության վերահսկմանը, մասնավորապես՝ կողաշրջման կանխարգելման համար հատուկ նախատեսված հակաշրջափակիչ արգելակային համակարգի (ՀԱՀ) հենքով արգելակների կառավարման համակարգին (այսուհետ ԿԿՀ), որում օգտագործվում է ոչ հստակ տրամաբանությամբ կառավարում (ՈՀՏ):

Առաջարկվող համակարգն ունի ՀԱՀ, ԱՏՄ-ի և դրա անիվների վարքն ընկալող տվիչներ, ԱՏՄ-

(54) L-Ֆենիլլալանինի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիայի բնագավառին, մասնավորապես՝ L-Ֆենիլլալանինի ստացման եղանակներին:

Բենզալդեհիդից քիմիական սինթեզով ստանում են β ֆենիլպիրոխաղողաթթվի նատրիումական աղը, ապա իրականացնում են դրա կենսակերպափոխում L-Ֆենիլլալանինի՝ 30°C ջերմաստիճանում պիրիդոքսալ ֆոսֆատի և L-ասպարազինաթթվի առկայությամբ: Կենսակերպափոխումն իրականացնում են Erwinia aroidea (ИНММА N 8724) շտամից անջատված և իոնափոխանակային քրոմատագրության եղանակով մասնակի մաքրված ֆերմենտային պատրաստուկով ռեակցիայի խառնուրդի pH-ի 8,9 արժեքում: β ֆենիլպիրոխաղողաթթվի նատրիումական աղի կոնցենտրացիան 0,05 M արժեքից ցածր իջնելուց հետո ռեակցիայի խառնուրդը լրասնուցում են՝ ավելացնելով բյուրեղային β ֆենիլպիրոխաղողաթթվի նատրիումական աղը մինչև 0,4 M կոնցենտրացիան և շարունակում են պրոցեսը մինչև L-Ֆենիլլալանինի կոնցենտրացիան խառնուրդում հասնի 132 գ/լ արժեքի: Ստացված L-Ֆենիլլալանինը անջատում են ռեակցիայի միջավայրից և մաքրում հայտնի մեթոդով:

Բարձրացվում է L-Ֆենիլլալանինի ելքը, պարզեցվում է եղանակը:

(51) (2011.01) (11) 2480 (13) A
C23C 12/00

(21) AM20100112 (22) 23.08.2010
(71) Գուրգեն Սարգիսյանի Հովսեփյան (AM)
(72) Գուրգեն Հովսեփյան (AM), Նաիրա Հովսեփյան (AM), Սոնյա Ոսկանի Վարդանյան (AM), Արմեն Հովսեփյան (AM), Կարեն Աղբալյան (AM)
(73) Գուրգեն Սարգիսյանի Հովսեփյան, 0062, Երևան, Թոթովենցի 1/1, բն. 35 (AM)

(54) Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալվածքային գործիքանյութերի, մասնավորապես՝ արագահատ գործիքային պողպատների մշակման եղանակներին:

Գործիքանյութը յուղազերծում են, գործիքանյութի աշխատանքային մակերևույթը պատում են մետաղ պարունակող պատվածքով:

Մետաղապատումն իրականացնում են գործիքանյութի աշխատանքային մակերևույթի վրա 70–75% էմուլսային տուսինձ և 20–25% ամոֆումի պերոռենատ ներառող համասեռ մածուկի շերտով պատելով: Մետաղապատված գործիքանյութը չորացնում են, տաքացնում 1230–1250°C ջերմաստիճանում ջրածնի միջավայրում, պահում տաքացման ջերմաստիճանում 1,5–2 ժամ, հովացնում և կրկին չորացնում 100–150°C ջերմաստիճանում 30–35 րոպեի ընթացքում:

Բարձրացվում են գործիքանյութերի մաշակայունությունը, երկարակեցությունը և հուսալիությունը:

(51) (2011.01) (11) 2481 (13) A
C23C 14/00

(21) AM20100053 (22) 07.05.2010
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Էմմա Ռուբենի Առաքելովա (AM), Զոյա Մելիքի Ֆարմազյան (AM), Աշոտ Մանուչարի Խաչատրյան (AM), Կարապետ Էդուարդի Ավջյան (AM), Ալվարո Բագրատի Միրզոյան (AM), Սեդրակ Համայակի Ղազարյան (AM), Ֆլորա Հայկի Արսենյան (AM)
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Կենսաբանորեն ակտիվ կոմպոզիցիոն ծածկույթի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է նրբաթաղանթ ծածկույթների ստացման բնագավառին, մասնավորապես՝ հակաուռուցքային կոմպոզիցիոն ծածկույթի ստացման եղանակին:

Տակդիրի մակերևույթը պատում են օրգանական, մետաղաօրգանական կամ անօրգանական միացությունով, ապա թիրախի մագնետրոնային փոշեցրման մեթոդով տակդիրի մակերևույթին նստեցնում են ցինկի օքսիդի նուրբ թաղանթ: Որպես օրգանական միացություն օգտագործում են DL-β-ֆենիլ-α-ալանինի էթիլային եթերի խառնուրդը պոլիվինիլային սպիրտի հետ, որպես մետաղաօրգանական միացություն՝

սալիցիլիդեն DL-թիրոզինի էթիլային եթերի Cu(II) խելատը կամ սալիցիլիդեն DL-β-ֆենիլ-α-ալանինի էթիլային եթերի Cu(II) խելատը, կամ դրանցից որևէ մեկի խառնուրդը պոլիվինիլային սպիրտի հետ, իսկ որպես անօրգանական միացություն՝ ցիսպլատին:

Ապահովվում է բարձր հակաուռուցքային ակտիվությամբ և ցածր թունավորությամբ նրբաթաղանթ ծածկույթի ստացումը:

(51) (2011.01) (11) 2482 (13) A
E04H 6/00

- (21) AM20100117 (22) 01.09.2010
- (71) «Բնաբուժություն» ՍՊԸ (AM)
- (72) Վարուժան Հայկի Ոսկոնյան (RU), Անթրանիկ Վարուժանի Ոսկոնյան (RU), Անդրանիկ Հայկի Ոսկոնյան (AM),
- (73) «Բնաբուժություն» ՍՊԸ, 0001, Երևան, Աբովյան 34ա, բն. 57 (AM)
- (54) **Խցավոր ավտոտնակ**
- (57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ խցավոր ավտոտնակների կառուցվածքներին:

Խցավոր ավտոտնակը ներառում է հինգ հարկ ունեցող, երկաթբետոնից կամ մետաղական կառուցվածքներից պատրաստված վերգետնյա շինություն, որի կենտրոնում տեղակայված է ամբարձիչ ունեցող հորան: Հորանի շուրջը շառավղայնորեն տեղակայված են ավտոմեքենաների կայանման ութ խցերը: Ամբարձիչը կազմված է փոխազուցավոր հիդրավլիկական շարժաբերից և հարթակից, որն իր կենտրոնում ունի դարձկեն հարթակ: Ավտոտնակի առաջին հարկում խցերից մեկը մուտքի խուցն է, որի միջով ավտոմեքենան անցնում է ամբարձիչի հարթակի վրա: Ավտոտնակի յուրաքանչյուր երկու խուց ունեն մեկ ընդհանուր պտուտասանդուղք: Խցերն իրարից բաժանված են միջնորմներով, իսկ յուրաքանչյուր խուց ամբարձիչի հարթակից բաժանված է բլրկավորման հնարավորություն ունեցող և վերև բարձրացվող շերտափեղկավոր դարպասով: Միջնորմներն իրենց կողային մասում, ամբարձիչի հարթակի կողմից ունեն ուղղորդիչներ: Խցի հատակն ամբարձիչի հարթակի նկատմամբ ունի թեքություն դեպի ներքև:

Պարզեցվում է ավտոտնակի կառուցվածքը, ապահովվում է խցի հասանելիությունը ավտոմեքենայի սեփականատիրոջ համար, 2 նկ.:

(51) (2011.01) (11) 2483 (13) A
E21B 43/00

- (21) AM20100137 (22) 18.10.2010
- (71) Հարություն Ավետիքի Պեպանյան (AM)
- (72) Հարություն Ավետիքի Պեպանյան (AM)
- (73) Հարություն Ավետիքի Պեպանյան, 0021, Երևան, Ադոնցի 17/2, բն. 45 (AM)
- (54) **Ստորջրյա հորատանցքերի խցանման համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է ստորջրյա հորատանցքերից ածխաջրածնային հումքի (նավթ, նավթա-գազային խտուցք, բնական գազ և այլն) հոսքի կարգավորման բնագավառին:

Համակարգն ունի լողամիջոցից ստորջրյա վթարված հորատանցքի վրա իջեցվող մետաղյա պատյան, որի վրա արված են փականներ ունեցող անցքեր: Պատյանի վրայի անցքերը բաժանված են երկու խմբի, որոնցից առաջին խմբի անցքերը տեղակայված են տարբեր մակարդակների վրա պատյանի շուրջը՝ դրա ստորին մասի արտաքին մակերևույթին և միացված են լողամիջոցի հետ կապված ճկափողերին: Այդ անցքերի վրա տեղադրված փականներն ունեն երկկողմ աշխատելու հնարավորություն: Հորատանցքի խցանման իրականացումից առաջ այս անցքերը ծառայում են ժայթքող նյութի արտահոսքի համար, իսկ հետագայում կարող են արդյունահանել արդեն նվազած ճնշմամբ արտահոսող ածխաջրածնային հումքը, կամ հակառակ ուղղությամբ դեպի պատյան մղել խտացնող հեղուկ: Երկրորդ խմբի անցքերը տեղակայված են պատյանի վերին մասում և նախատեսված են ճկափողերի միջոցով պողպատե ողորկած գնդերով պատյանի ներսի ծավալի բեռնավորման համար:

Պարզեցվում է հորատանցքի խցանումը, ապահովվում է աշխատանքների հուսալիությունը և անվտանգությունը, 6 նկ.:

(51) (2011.01) (11) 2484 (13) A
F16L 55/00

- (21) AM20100073 (22) 07.06.2010
- (71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ալբերտ Յախշիբեկի Մարգարյան (AM),
Էդուարդ Պետրոսի Աշխյանց (AM), Վաչե Հով-
հաննեսի Թոքմաջյան (AM)

(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Խողովակաշարերում հիդրավլիկական հարվածի մարման համակարգ

(57) Համակարգն ունի պոմպ, պոմպին ամրակցված մղման խողովակաշար, որի վրա տեղադրված է հակադարձ կափույր, կափույրը շրջանցող գիծ, որի ծայրերը միացված են մղման խողովակաշարին և շրջանցող գծի վրա տեղադրված շրջադարձային կափույր: Շրջադարձային կափույրն ունի էլեկտրական շարժաբեր, որը էլեկտրոնային կարգավորիչի միջոցով միացված է սինքրոն գեներատորին և պոմպի լիսեռին: Էլեկտրոնային կարգավորիչն ունի բալաստային էլեկտրական բեռ:

Շրջադարձային կափույրի փակման ժամանակ բացառվում է մղման խողովակաշարում հիդրավլիկական նոր հարվածի առաջացումը, գիշերային ժամերին վթարային հոսանքազրկման դեպքում ապահովվում է պոմպակայանի լուսավորությունը, 2 նկ.:

(51) **(2011.01)** (11) **2485** (13) **A**
G01N 33/48

(21) **AM20100119** (22) **07.09.2010**

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Գրիգոր Բարդուղիմեոսի Սերոբյան (AM), Անդրանիկ Ավետիսի Հարությունյան (AM), Վահան Աշոտի Խաչատրյան (AM), Վրեժիկ Վաղարշակի Խոցանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Կաթնասունների ենթակլինիկական մաստիտի ախտորոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ախտորոշման եղանակներին, մասնավորապես՝ կովերի և կանանց ենթակլինիկական մաստիտի ախտորոշման եղանակներին:

Կաթի նմուշին ավելացնում են ախտորոշիչ միջոցի ջրային լուծույթ 1:1 զանգվածային հարաբերակցությամբ: Որպես ախտորոշիչ միջոց օգտագործում են սինթանոլի և նատրիումի հիդրօքսիդի խառնուրդը, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. % սինթանոլ՝ 1.0 – 2.0, նատրիումի հոդրօքսիդ՝ 0.3 – 0.8, թորած ջուր՝ 96.0 – 98.0:

Բարձրացվում է ախտորոշման հավաստիությունը:

(51) **(2011.01)** (11) **2486** (13) **A**
G12B 21/00
H01J 37/26

(21) **AM20090093** (22) **24.07.2009**

(71) Ռոբերտ Զալիբեկի Զիջյան (IL)

(72) Ռոբերտ Զալիբեկի Զիջյան (IL), Անահիտ Ռոբերտի Զիջյան (AM), Գայանե Ռոբերտի Զիջյան (AM)

(73) Ռոբերտ Զալիբեկի Զիջյան, 52401, Իսրայել, Ռամատ Գան, Հարոե 121, բն. 3 (IL)

(54) Ատոմային մանրադիտակի դիտարկող հանգույց

(57) Գյուտը վերաբերում է ատոմային մանրադիտակների ոլորտին, որը կազմում է նանոտեխնոլոգիաների հիմքը:

Սարքն ունի տեսաձրող ասեղից, դետեկտորից, ասեղի շարժիչից և հետադարձ կապի էլեկտրոնային բլոկի միկրոսխեմայից բաղկացած դիտարկող գլխիկներ: Մեկը մյուսից աշխատանքային ֆունկցիայով մեկուսացված դիտարկող գլխիկները տեղադրված են միասնական հարթ ուղղանկյուն պատյանում՝ կազմելով ու տողերից յուրաքանչյուրում ու դիտարկող գլխիկ պարունակող մատրից: Դիտարկող հանգույցն ունի նաև կողավորող բլոկ, որի մուտքին միացված են բոլոր դիտարկող գլխիկների հետադարձ կապի ելքերը, իսկ կողավորող բլոկի ելքը կապված է մատրիցային գլխիկի դիմաց գտնվող նմուշի մակերևույթի հատվածի ամբողջական տեսաձրված պատկերը կառուցող համակարգչին:

Կատարվում է նմուշի մակերևույթի միաժամանակ տեսաձրային (սկաներային) դիտարկում և կազմվում ամբողջական տեսաձրված պատկեր, 1 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) **(2011.01)** (11) **221** (13) **Ս**
A24D 1/00
- (21) **AM20100110U** (22) **17.08.2010**
- (71) Ըլայդ Գլոուբլ ԹեքնոլոՂի Լիմիթիդ (GB)
- (72) Մարիամ Գուրգենիձե (GE)
- (73) Ըլայդ Գլոուբլ ԹեքնոլոՂի Լիմիթիդ (GB)
- (54) **Առանց զտիչի սիգարետ (տարբերակներ)**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է ծխախոտի արդյունաբերությանը և կարող է կիրառվել առանց զտիչի սիգարետների արտադրության մեջ:

Սիգարետն ունի սիգարետի թղթի մեջ տեղադրված ծխախոտի ձող և ծխախոտի ձողի հետ բոլորքային թղթով միացված պլաստմասսայե փողածայրոց, որը տեղակայված է թղթե գլանի մեջ ամբողջ երկայնքով և իրականացված է համառանցք տեղակայված արտաքին և ներքին պլաստմասսայե փողակների տեսքով: Փողակները միացված են առնվազն երեք՝ իրարից հավասար քայլով հեռացված կոշտության շառավղային կողերով: Ներքին փողակի անցքի տրամագծի և արտաքին փողակի արտաքին տրամագծի հարաբերակցությունը 0,4 է:

Օգտակար մոդելի մյուս տարբերակում պլաստմասսայե փողածայրոցը տեղակայված է թղթե գլանի մեկ երրորդական արտաքին ծայրերում սեգմենտների տեսքով, որոնք առաջին տարբերակի նման համառանցք տեղակայված արտաքին և ներքին պլաստմասսայե փողակներ են:

Ապահովվում են փողածայրոցի կոշտությունը և ծխելու հարմարավետությունը, բարելավվում է սիգարետի էսթետիկ տեսքը, 2 անկախ կետ, 4 նկ.:

(74) Հ. Դավթյան

-
- (51) **(2011.01)** (11) **222** (13) **Ս**
B02C 18/00
A47J 43/00
 - (21) **AM20100133U** (22) **07.10.2010**
 - (71) Արտաշես Գուրգենի Հակոբյան (AM), Արամ Արտաշեսի Հակոբյան (AM), Վահագն Արտաշեսի Հակոբյան (AM)

(72) Արտաշես Գուրգենի Հակոբյան (AM), Արամ Արտաշեսի Հակոբյան (AM), Վահագն Արտաշեսի Հակոբյան (AM)

(73) Արտաշես Գուրգենի Հակոբյան, 0054, Երևան, Դավթաշենի 4-րդ փող. 31, բն. 27 (AM), Արամ Արտաշեսի Հակոբյան, 0054, Երևան, Դավթաշենի 4-րդ փող. 31, բն. 27 (AM), Վահագն Արտաշեսի Հակոբյան, 0054, Երևան, Դավթաշենի 4-րդ փող. 31, բն. 27 (AM)

(54) Մսի փխրեցման մեքենա

(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ մսի կիսաֆաբրիկատների պատրաստման սարքերին:

Մսի փխրեցման մեքենան ունի իրան, իրանում տեղադրված ատամնանիվ-լիսեռիկներ, որոնցից վերինը ազատ գլորմամբ տեղադրված է Ո-աձև մասի վրա, իսկ ստորին ատամնանիվը տեղադրված է իրանի վրա: Ատամնանիվների միջև բացակը կարգավորվում է վերին բռնակի միջոցով՝ կախված մշակվող մսի հաստությունից: Մեքենան ունի սեղանին անշարժ ամրացնելու հնարավորություն հեղույսի ու պնօզոլակի միջոցով:

Կարգավորվում է մշակվող մսի հաստությունը, իջեցվում է ինքնարժեքը, 3 նկ.:

-
- (51) **(2011.01)** (11) **223** (13) **Ս**
B65F 1/00
 - (21) **AM20100083U** (22) **23.06.2010**
 - (71) Սուսաննա Արտաշեսի Օհանյան (AM)
 - (72) Սուսաննա Արտաշեսի Օհանյան (AM), Վարդգես Իգիթի Գրիգորյան (AM)
 - (73) Սուսաննա Արտաշեսի Օհանյան, 0010, Երևան, Թումանյան 11ա, բն.56 (AM)
 - (54) **Աղբաման**

(57) Աղբամանն ունի պատյան և միջուկ: Միջուկը կայուն ներքին ծավալ ունեցող, պոլիէթիլենի երկրորդային հումքից ձուլված, իրար մեջ հագցված պարկերի հավաքածու է: Հավաքածուի պարկերից յուրաքանչյուրն ունի իր կողմնային մակերևույթի շարունակությունը կազմող, պարկի բաց կողմում միմյանցից

հավասար հեռավորության վրա տեղակայված չորս ականջ: Հավաքածուն ունի հատած կոնի կամ հատած քառանկյուն բուրգի ձև և տեղադրված է միևնույն ձևն ունեցող պատյանի մեջ: Պատյանը պլաստմասսայի երկրորդային հումքից պատրաստված, հավաքածուի արտաքին չափերին համապատասխանող ջերմակայուն արկղ է:

Բարձրացվում է աղբամանի օգտագործման արդյունավետությունը՝ նպաստելով շրջակա միջավայրի մաքրության պահպանմանը, 3 նկ.:

(51) (2011.01) (11) 224 (13) U
C12G 3/00

(21) AM20090158U (22) 18.12.2009
(71) Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյան (AM), Ֆելիքս Զարգանդի Մելիքսեթյան (AM)
(72) Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյան (AM), Ֆելիքս Զարգանդի Մելիքսեթյան (AM)
(73) Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյան, 0037, Երևան, Արաբկիրի 51-րդ փող., 54 (AM), Ֆելիքս Զարգանդի Մելիքսեթյան, 0056, Երևան, Նանսենի 7, բն. 15 (AM)

(54) **Հացահատիկային սպիրտի հասունացման եղանակ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ հացահատիկային սպիրտի հասունացման եղանակին:

Հացահատիկային սպիրտը փոխգործողության մեջ են դնում կաղնու թեփի հետ, ընդ որում հացահատիկային սպիրտը և կաղնու թեփը խառնում են 1:0,4 հարաբերակցությամբ: Այնուհետև ստացված խառնուրդը հասունացնում են անցկացնելով կավիտացիոն դաշտի միջով՝ խառնուրդ մատուցելով գազակերպ թթվածին 12-15մգ/լ հաշվարկով: Խառնուրդը կավիտացիոն դաշտի միջով անցկացնում են 10-12 անգամ՝ մինչև խառնուրդում լուծահանված նյութերի հազեցվածության աստիճանը կազմի առնվազն 0,914:

Ապահովվում է հացահատիկային սպիրտի որակի բարձրացում՝ կաղնեփայտի թեփի բաղադրամասերի լիակատար լուծահանման շնորհիվ:

(51) (2011.01) (11) 225 (13) U
C12G 3/00

(21) AM20090157U (22) 18.12.2009
(71) Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյան (AM), Ֆելիքս Զարգանդի Մելիքսեթյան (AM)
(72) Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյան (AM), Ֆելիքս Զարգանդի Մելիքսեթյան (AM)
(73) Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյան, 0037, Երևան, Արաբկիրի 51-րդ փող., 54 (AM), Ֆելիքս Զարգանդի Մելիքսեթյան, 0056, Երևան, Նանսենի 7, բն. 15 (AM)

(54) **Խնձորի սպիրտի հասունացման եղանակ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ խնձորի սպիրտի հասունացման եղանակին:

Խնձորի երիտասարդ սպիրտը խառնում են կաղնու թեփի հետ, ընդ որում խնձորի երիտասարդ սպիրտը և կաղնու թեփը խառնում են 1:0,3 հարաբերակցությամբ: Այնուհետև ստացված խառնուրդը հասունացնում են անցկացնելով կավիտացիոն դաշտի միջով՝ խառնուրդ մատուցելով գազակերպ թթվածին 12-15 մգ/լ հաշվարկով: Խառնուրդը կավիտացիոն դաշտի միջով անցկացնում են 6-8 անգամ՝ մինչև խառնուրդում լուծահանված նյութերի հազեցվածության աստիճանը կազմի առնվազն 0,9014: Այնուհետև ստացված սպիրտն անջատում են թեփից

Ապահովվում է խնձորի սպիրտի որակի բարձրացում՝ կաղնեփայտի թեփի բաղադրամասերի լիակատար լուծահանման շնորհիվ:

(51) (2011.01) (11) 226 (13) U
E04G 7/00

(21) AM20100089U (22) 08.07.2010
(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Գագիկ Շահաբեկի Գալստյան (AM), Վալտեր Աշոտի Աթանեսյան (AM), Արմեն Մարտինի Սիմոնյան (AM), Աննա Արտավազդի Բազադրյան (AM)
(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Շինարարական փայտամածների փոխհատվող խողովակների միացման սարք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է շինարարության բնագավառին և կարող է օգտագործվել փայտամածների հավաքման համար:

Շինարարական փայտամածների փոխհատվող խողովակների միացման սարքն ունի կեռածև ճարմանդ և սեպ: Ճարմանդի հետին պատին կոշտ ամրակցված է ելուստ: Ճարմանդի ելուստի ամրակցման հատվածամասում արված է սեպի կողերին համապատասխան ուղղորդող ակոս: Սեպն իր նեղ հատվածամասում ունի սեպի շարժումը ուղղորդող ակոսի մեջ սահմանափակող ելուստ:

Բարձրացվում է հուսալիությունը, 2 նկ.:

(51) **(2011.01)** (11) **227 (13) U**
E04G 17/00

(21) **AM20100130U** (22) **30.09.2010**

(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Գագիկ Շահաբեկի Գալստյան (AM), Վալտեր Աշոտի Աթանեսյան (AM), Աննա Արտավազդի Խաչատրյան (AM), Արմեն Մարտինի Սիմոնյան (AM)

(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Կաղապարամածային վահանների միակցման փականք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է միաձույլ շինարարության բնագավառին և կարող է օգտագործվել երկաթբետոնե հեծանների կաղապարամածային հարակից վահանների միակցման համար:

Կաղապարամածային վահանների միակցման փականքն ունի անշարժ սեղմիչ իր առանցքային ճեղքով և ակոս ունեցող շարժական սեղմիչ: Անշարժ սեղմիչին ամրակցված է հեղույս, շարժական սեղմիչին բարձակով միակցված է վռան, որը ընդգրկում է անշարժ սեղմիչին ամրակցված հեղույսը, ընդ որում վռանը տեղավորված է մանեկի օգնությամբ հեղույսի վրա տեղաշարժվելու հնարավորությամբ:

Պարզեցվում է փականի կառուցվածքը և ապահովվում է աշխատանքի հարմարավետությունը, 2 նկ.:

(51) **(2011.01)** (11) **228 (13) U**
F01P 5/00

(21) **AM20100085U** (22) **23.06.2010**

(71) Սամվել Արամի Ներսիսյան (AM), Օհան Սուրենի Մուրադյան (AM)

(72) Սամվել Արամի Ներսիսյան (AM), Օհան Սուրենի Մուրադյան (AM)

(73) Սամվել Արամի Ներսիսյան, 0096, Երևան, Մալյան փող. նրբ. 11, բն.43 (AM), Օհան Սուրենի Մուրադյան, 0054, Երևան, Դավթաշենի 1-ին փող., 37-14 (AM)

(54) Ռադիատորի շերտափեղկերի կառավարման սարք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է ավտոմոբիլաշինությանը, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչի հովացման համակարգին:

Սարքն ունի մետաղական ճկուն շարժաբեր, որի մի ծայրն ամրակցված է շերտափեղկերի շարժական իրանին, իսկ մյուս ծայրը՝ ավտոմոբիլի վարորդի խցիկի կառավարման վահանակին: Սարքն ունի նաև ջերմաստիճանի էլեկտրական տվիչ, էլեկտրամագնիսական իմպուլսի փոխարկիչ, երկկողմ էլեկտրամագնիսական ձգան և շերտափեղկերի ձգող լծակ: Ջերմաստիճանի էլեկտրական տվիչի ելքը միացված է էլեկտրամագնիսական իմպուլսի փոխարկիչի մուտքին, որի ելքը միացված է երկկողմ էլեկտրամագնիսական ձգանի մուտքին, իսկ ձգանի ելքը միացված է շերտափեղկերի ձգող լծակին, որը տեղադրված է շարժաբերի վրա:

Բարձրացվում է հովացման համակարգի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) **(2011.01)** (11) **229 (13) U**
F02B 53/00

(21) **AM20100087U** (22) **01.07.2010**

(71) Սամվել Արամի Ներսիսյան (AM), Մարինա Սերգեյի Բարսեղյան (AM)

(72) Սամվել Արամի Ներսիսյան (AM), Մարինա Սերգեյի Բարսեղյան (AM)

(73) Սամվել Արամի Ներսիսյան, 0096, Երևան, Մալյան փող. նրբ. 11, բն. 43 (AM), Մարինա Սերգեյի Բարսեղյան, 0074, Երևան, Օստրովսկու 37 (AM)

(54) Բենզինային շարժիչի կանխավառման անկյան կարգավորման մեխանիզմ

(57) Մեխանիզմն ունի աներոդիային սիլֆոնային խցիկ, դրան ամրակցված ձգաձող և բաշխիչ-ընդհատիչ: Բաշխիչ-ընդհատիչն ունի բռնցքավոր լիսեռիկ և դրան հենված հպումային համակարգ: Հպումային համակարգն իրականացված է շարժական հպումային բլրկի տեսքով, ունի բնիկ և դրան հենված ծայրապանակ:

Բարձրացվում է կանխավառման անկյան կարգավորման ճշգրտությունը, 1 նկ.:

(51) **(2011.01)** (11) **230(13) U**
G06F 1/00
G06F 1/00

(21) **AM20100107U** (22) **02.08.2010**

(71) Հրաչյա Հովհաննեսի Չոբանյան (AM), Մխիթար Միհրանի Մուրադյան (AM)

(72) Հրաչյա Հովհաննեսի Չոբանյան (AM), Մխիթար Միհրանի Մուրադյան (AM)

(73) Հրաչյա Հովհաննեսի Չոբանյան, 0040, Երևան, Աճարյան 36, բն.10 (AM), Մխիթար Միհրանի Մուրադյան, 0033, Երևան, Երզնկյան 1, բն.49 (AM)

(54) Անձնական համակարգչի միաբլոկ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է միաբլոկի տեսքով կատարված թվային անձնական համակարգիչների իրանի կառուցվածքին և դրա ներքին ծավալի հովացմանը:

Միաբլոկն ունի կոշտ սալիկի տեսքով մետաղական էկրան, որը տեղակայված է մոնիտորի և պրոցեսորի բլոկի միջև և ամրակցված է իրանի առջևի մասին, ընդ որում պրոցեսորի բլոկի սարքերն ու բլոկները և իրանի հետևի մասը ամրակցված են այդ մետաղական սալիկին: Սնուցման բլոկն ունի լրացուցիչ օդափոխիչ, որի օդի հոսքի ուղղությունը զուգահեռ է հիմնական օդափոխիչի օդի հոսքի ուղղությանը: Միաբլոկի իրանը լրացուցիչ ունի միջին մաս, որը կատարված է ցանցավոր օղազոտու տեսքով և իր եզրային մասերով տեղադրված է իրանի առջևի և հետևի մասերի պարագծերով կատարված համապատասխան փորակների մեջ, իսկ կողմնային պատին ունի պատուհան արտաքին սարքերի հետ կապի հարակցիչների վահանակի համար:

Լավացվում է իրանի ներքին ծավալի հովացման պայմանները և ստեղծվում է անձնական համակարգիչների համար նախատեսված սարքերի և համալրող պատրաստվածքների կիրառման հնարավորություն, 4 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	<i>վկայագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ստացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
24	<i>գրանցման թվականը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
51	<i>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</i>
54	<i>արդյունաբերական նմուշի անվանումը</i>
55	<i>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</i>
71	<i>հայտատուն(ները), երկրի կոդը</i>
72	<i>հեղինակը(ները), երկրի կոդը</i>
73	<i>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) **09-03** (11) **243** (13) **S**
09-05
 (21) **20100019** (22) **14.10.2010**
 (71) Վարշամ Արամի Ղարիբյան (AM)
 (72) Վարշամ Ղարիբյան (AM)
 (73) Վարշամ Արամի Ղարիբյան, Երևան, Եղիազարյան փող., տուն 10 (AM)
 (54) **Մեկանգամյա օգտագործման սննդային արտադրատեսակի փաթեթ (տարա)**
 (55)



1.1



1.2



1.3



1.4

(51) **09-03** (11) **244** (13) **S**
09-05
 (21) **20100018** (22) **13.10.2010**
 (71) Արմեն Մեհրաբյան (AM)
 (72) Արմեն Մեհրաբյան (AM)
 (73) Արմեն Մեհրաբյան, Երևան, Կոմիտաս 7-3, բն. 33 (AM)
 (54) **«Հայկական թեյ» տուփով թեյաքսակ**
 (55)



1.1



1.2

- (51) 11-02 (11) 245 (13) S
- (21) 20100010 (22) 02.07.2010
- (71) Անհատ ձեռնարկատեր Աշոտ Գրիգորյան (AM)
- (72) Աշոտ Գրիգորյան (AM)
- (73) Անհատ ձեռնարկատեր Աշոտ Գրիգորյան, Երևան, Կիևյան 11շ., 4-րդ մուտք, բն. 1 (AM)
- (54) Հուշանվեր «Տերունական աղոթք» (8 տարբերակ)
- (55)



4.1



1.1



5.1



2.1



6.1



3.1



7.1



8.1

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ


ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

- (210) **20101212** (111) **16288**
 (220) **19.08.2010** (151) **09.12.2010**
 (181) **19.08.2020**
 (730) Անհատ ձեռնարկատեր Արշավիր Դավթյան,
 Երևան, Սիմոն Վրացյան 86/4, AM
 (540)



- (511) (510)
 դաս 14. ազնիվ մետաղներ և դրանց համա-
 հավվածքներ, դրանցից պատրաստված կամ
 դրանցով պատված իրեր, որոնք ընդգրկված
 չեն այլ դասերում. ոսկերչական իրեր, զարդեր,
 թանկարժեք քարեր. ժամացույցներ և այլ ժամա-
 նակաչափ սարքեր:

- (210) **20101340** (111) **16289**
 (220) **22.09.2010** (151) **14.12.2010**
 (181) **22.09.2020**
 (730) «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք.
 Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1, AM
 (540)



- (526) Բացի «ararat» բառից մնացած բոլոր
 գրառումներն ինքնուրույն պահպանության
 օբյեկտներ չեն:
 (591) Նշանը պահպանվում է մուգ և բաց կա-
 պույտ, կարմիր, դեղին, ծիրանագույն, մուգ
 և բաց կանաչ, շագանակագույն, սև և սպի-
 տակ գունային համակցությամբ:
 (511) (510)
 դաս 32. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր.
 օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ
 բաղադրանյութեր:

- (210) **20101341** (111) **16290**
 (220) **22.09.2010** (151) **14.12.2010**
 (181) **22.09.2020**
 (730) «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք.
 Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1, AM
 (540)



- (526) Բացի «ararat» բառից մնացած բոլոր
 գրառումներն ինքնուրույն պահպանության
 օբյեկտներ չեն:
 (591) Նշանը պահպանվում է մուգ և բաց կա-
 պույտ, կարմիր, դեղին, մուգ և բաց կանաչ,
 մանուշակագույն, փիրուզագույն, ծիրա-
 նագույն, շագանակագույն, սև և սպիտակ
 գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 32. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(210) **20101342**

(111) **16291**

(220) **22.09.2010**

(151) **14.12.2010**

(181) **22.09.2020**

(730) «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք. Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1, AM

(540)



(526) Բացի «ararat» բառից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է մուգ և բաց կապույտ, կարմիր, դեղին, շագանականագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 32. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(210) **20101343**

(111) **16292**

(220) **22.09.2010**

(151) **14.12.2010**

(181) **22.09.2020**

(730) «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք. Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1, AM

(540)



(526) Բացի «ararat» բառից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է մուգ և բաց կապույտ, մուգ և բաց կանաչ, մանուշակագույն, կարմիր, դեղին, ծիրանագույն, շագանակագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 32. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(210) **20101344**

(111) **16293**

(220) **22.09.2010**

(151) **14.12.2010**

(181) **22.09.2020**

(730) «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք. Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1, AM

(540)



(526) Բացի «ararat» բառից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է ծիրանագույն, մուգ և բաց կապույտ, կարմիր, դեղին, կանաչ, շագանակագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 32. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(210) 20101345

(111) 16294

(220) 22.09.2010

(151) 14.12.2010

(181) 22.09.2020

(730) «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք. Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1, AM

(540)



(526) Բացի «ararat» բառից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է մուգ և բաց կապույտ, մուգ և բաց կանաչ, կարմիր, դեղին, վարդագույն, մոռագույն, մանուշակագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

